396 Երբ կճնշեն իմ խեղճ հոգիս

1. Երբ կճնշեն իմ խեղճ հոգիս
Կարիք, վիշտ ու թախիծ,
Աղոթք կընեմ ես իմ Փրկչիս
Սրտով մաքուր, անբիծ:

2. Կթավալին բեռներն սրտիս,
Հոգիս կերգե նորեն,
Քանզի Անոր սիրո շրթներ
Սրտիս շնորհք կբխեն:

3. Հայնժամ կցրվին սև ամպեր,
Հոգիս թևեր կառնե,
Ու կթռչիմ արծվի պես
Հեռու ցավե, վիշտե:

***

1. Երբ իմ սրտին մի պահ կյանքում
Տիրում է խոր թախիծ,
Ես մի աղոթք եմ մրմնջում
Տրտմած հոգուս խորքից:

2. Քնքուշ խոսքերում կենդանի
Մի ուժ ինձ անսովոր
Կարծես տանում է երկնային
Ափերը լուսավոր:

3. Ճնշող մի բեռ ասես հանկարծ
Ընկնում է իմ սրտից,
Արցունքները թափվում են ցած,
Թեթև եմ ես նորից: